Սարատակ

Վարչական ղեկավար՝ Դավիթ Վարդանյան

Հեռ: 093 60 32 20

Մակերես՝ 11.3կմ²

Բնակչություն՝ 1400

Ինդեքս՝ 3022

sona.petrosyan.9393@mail.ru

Սարատակը գտնվում է Հայաստանի Շիրակի մարզում, Արթիկ համայնքի վարչական շրջան է, Արթիկից գտնվում է 11 կմ հեռավորության վրա, իսկ մարզկենտրոն Գյումրուց՝ 17 կմ հարավ, Կարկաչան գետի աջափնյակում: Նախնիները 1830 թ.-ին գաղթել են Վերին Բասենի Կամրջագեղ գյուղից: Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, հացահատիկի, կերային կուլտուրաների, ծխախոտի մշակությամբ և բանջարաբուծությամբ: Սարատակում կա կանգուն եկեղեցի: Արտավազդ Իգնատյան - պատմաբան, մանկավարժական գիտությունների թեկնածու: Հակոբ Սողոմոնյան (1949) - արձակագիր, թարգմանիչ, լրագրող: Գրիգորյան Անդրանիկ Գևորգի (1922 -) - հայրենական մեծ պատերազմի մասնակից: Պարգևատրվել է «Մարտական ծառայության համար» մեդալով 30.10.1943: Զատիկյան Մուշեղ Վարդանի (1906 -) - Հայրենական մեծ

պատերազմի մասնակից։ Զինվորական կոչումն՝ ավագ լեյտենանտ։ Պարգևատրվել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանով 21.06.1944։ Ղազարյան Ավետիս Վարդանի (1904 - ?) - հայրենական մեծ պատերազմի մասնակից։ Զինվորական կոչումն՝ ավագ։ Պարգևատրվել է «Մարտական ծառայության համար» 21.11.1943 և «Խիզախության համար» 02.06.1944 մեդալներով և Կարմիր աստղի շքանշանով 15.02.1945։ Մկրտչյան Պետրոս Սարիբեկի (1912 -) - հայրենական մեծ պատերազմի մասնակից։ Զինվորական կոչումն՝ լեյտենանտ։ Երկու անգամ պարգևատրվել է Կարմիր աստղի շքանշանով 14.01.1944 և 19.05.1944։ Մնացյան Արզուման Ա. (1922 -) - հայրենական մեծ պատերազմի մասնակից։ Զինվորական կոչումն՝ ավագ լեյտենանտ։ Պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով 28.07.1943։ Պետրոսեան Հրանտ Վարոսի (1924 -) - հայրենական մեծ պատերազմի մասնակից։ Պարգևատրվել է «Խիզախության համար» մեդալով 08.09.1944։ Սողոմոնյան Վրույր Արտաշի (1913 -) - հայրենական մեծ պատերազմի մասնակից։ Պարգևատրվել է III աստիճանի «Փառքի շքանշանով» 31.03.1945։